

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/4

24 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի 03.07.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 29.04.2015 թ-ի թիվ 1270 որոշման դեմ:

Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի բողոքում բերված փաստարկները.

27.04.2015թ. ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության աշխատակցի կողմից կազմվել է հարկային պարտավորությունների վերաբերյալ նախնական հաշվարկ, որում նշվել է. «Ուսումնասիրությունից պարզվեց, որ հարկ վճարողը պետական գրանցում է ստացել 31.10.1994թ. և 2012, 2013, 2014թթ չի հանդիսացել ԱԱՀ վճարող: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի (2012թ. խմբագրությամբ) և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի հարկ վճարողը 2012, 2013, 2014 թթ համարվում է ԱԱՀ վճարող և պետք է ներկայացնել եռամսյակային ԱԱՀ հաշվարկներ, քանի որ ԱՁ Լյուդվիգ Ղազարյանը հանդիսանում է «Լյու Ընդ Ար» ԱՊԸ հիմնադիր՝ 20% և ավել բաժնեմասով:

29.04.2015թ. ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության պետը, հիմք ընդունելով վերը նշված հարկային պարտավորությունների վերաբերյալ նախնական հաշվարկը կայացրել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ թիվ 1270 որոշումը:

Վերը նշված որոշումը ստացվել է 07.05.2015թ.-ին:

Թիվ 1270 որոշումը կայացնելուց հետո տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, ինչն էլ հիմք է թիվ 1270 որոշումը վերանայելու և ամբողջությամբ վերացնելու համար: Բացի այդ, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հիմնարար սկզբունքների և նույն օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ գլուխների վարչական ակտը կայացվում է փաստական հանգամանքների հիման վրա, այլ ոչ թե կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների և/կամ տրամաբանական ենթադրությունների հիման վրա: Այսինքն, նշված հիմքով նույնպես թիվ 1270 որոշումը ենթակա է վերացման:

Թիվ 1270 որոշումը կայացվել է այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանը հանդիսանում է «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի հիմնադիր՝ 20% և ավել բաժնեմասով:

27.04.2011թ.-ին Արման Ղազարյանի և Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի միջև կնքվել է «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիր, որով իբրև վաճառողը՝ Արման Ղազարյանը, վաճառել է, իսկ Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանը ձեռք է բերել «Լյու Ընդ Ար» ՍՊԸ կանոնադրական կապիտալում առկա իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասն ամբողջությամբ, բաժնեմասի չափը՝ 100 տոկոս:

12.03.2015թ.-ին Արման Ղազարյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր

իրավասության դատարան ընդդեմ Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի (այսուհետ նաև բողոքաբեր), հետևյալ պահանջով. «խնդրում եմ 27.04.2011թ. «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառել առոչինչ /շինծու/ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ այդ գործարքի հիման վրա Լյուդվիգ Ղազարյանի անվամբ ՀՀ ԿԱ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից կատարված Լյուդվիգ Ղազարյանի «Լյու Ընդ Ար» ՍՊԸ կանոնադրական կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը ճանաչել անվավեր և այդ բաժնեմասերի նկատմամբ 27.04.2011 թ-ին կնքված պայմանագիրը ճանաչել պարտավորության ապահովման միջոց գրավի պայմանագիր»:

22.04.2015թ. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է վճիռ, որով վճռվել է Արման Լյուդվիգի Ղազարյանի հայցը բավարարել: 27.04.2011թ. «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառել առոչինչ /շինծու/ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ այդ գործարքի հիման վրա Լյուդվիգ Ղազարյանի անվամբ ՀՀ ԿԱ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի կողմից կատարված Լյուդվիգ Ղազարյանի «Լյու Ընդ Ար» ՍՊԸ կանոնադրական կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը ճանաչել անվավեր և այդ բաժնեմասերի նկատմամբ 27.04.2011 թ-ին կնքված պայմանագիրը ճանաչել պարտավորության ապահովման միջոց գրավի պայմանագիր:

Վերը նշված վճիռը 22.05.2015թ.-ին մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 26.06.2015թ.-ին տրվել է տեղեկանք, համաձայն որի «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի մասնակից է հանդիսանում միայն Արման Լյուդվիգի Ղազարյանը 100% բաժնեմասով:

Նույն տեղեկանքի համաձայն 26.06.2015թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում կատարվել է մասնակիցների փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին գրառում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի. «Գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք)»:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի. «Անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից»:

Տվյալ դեպքում 27.04.2011թ. «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ, որով բողոքաբերը դարձել է «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի 100 % բաժնեմասի սեփականատեր, կիրառվել է առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ, իսկ նման պայմաններում համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի նշված գործարքը անվավեր է կնքման պահից, ինչից հետևում է, որ բողոքաբերը չի հանդիսանում «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի հիմնադիր 20% և ավել բաժնեմասով, ինչպես նշվել է հարկային պարտավորությունների վերաբերյալ նախնական հաշվարկում:

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքաբերը չի հանդիսանում «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի հիմնադիր (մասնակից) և իր նկատմամբ կիրառելի չէ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները, բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության պետի 29.04.2015 թ-ի թիվ 1270 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 27.04.2015թ. դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի գծով կազմում են 18.480.880 դրամ, որից ապառք 7.825.798 դրամ, տույժ 3.708.959 դրամ, տուգանք 6.946.122 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 27.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 1270 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանից 18.480.880 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Որոշմամբ Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանից 18.480.880 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանը, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների 2012, 2013, 2014 թ.թ.-ի ընթացքում համարվել է ԱԱՀ վճարող, քանի որ հանդիսացել է «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի հիմնադիր 20% և ավել բաժնեմասով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

27.04.2011թ.-ին Արման Ղազարյանի և Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի միջև կնքվել է «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն Արման Ղազարյանը Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանին է վաճառել «Լյու Ընդ Ար» ՍՊԸ կանոնադրական կապիտալում առկա իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասն ամբողջությամբ:

12.03.2015թ.-ին Արման Ղազարյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Ա/Ձ Լյուդվիգ Ղազարյանի: Մասնավորապես, հայցադիմումով Արման Ղազարյանը խնդրել է 27.04.2011թ. «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառել առոչինչ /շինծու/ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ այդ գործարքի հիման վրա Լյուդվիգ

Ղազարյանի անվամբ ՀՀ ԿԱ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից «Լյու Ընդ Ար» ՍՊԸ կանոնադրական կապիտալում կատարված բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը ճանաչել անվավեր և այդ բաժնեմասերի նկատմամբ 27.04.2011 թ-ին կնքված պայմանագիրը ճանաչել պարտավորության ապահովման միջոց գրավի պայմանագիր:

22.04.2015թ.-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է վճիռ (այսուհետ՝ Վճիռ), որով վճռվել է Արման Լյուդվիգի Ղազարյանի հայրը բավարարել: Արդյունքում, Վճռով 27.04.2011թ. «Լյու Ընդ Ար» ՍՊԸ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառվել է առաջինը /շինձու/ գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ այդ գործարքի հիման վրա Լյուդվիգ Ղազարյանի անվամբ «Լյու Ընդ Ար» ՍՊԸ կանոնադրական կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը ՀՀ ԿԱ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի կողմից ճանաչվել է անվավեր և այդ բաժնեմասերի նկատմամբ 27.04.2011 թ-ին կնքված պայմանագիրը ճանաչվել է պարտավորության ապահովման միջոց՝ գրավի պայմանագիր:

Վճիռը 22.05.2015թ.-ին մտել է օրինական ուժի մեջ:

Վճռի հիման վրա ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 26.06.2015թ.-ին տրվել է տեղեկանք, համաձայն որի «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի մասնակից է հանդիսանում միայն Արման Լյուդվիգի Ղազարյանը 100% բաժնեմասով:

Նույն տեղեկանքի համաձայն 26.06.2015թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում կատարվել է մասնակիցների փոփոխության գրանցումն անվավեր ճանաչելու մասին գրառում:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի և 304-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ բողոքաբերը 2012, 2013, 2014 թ.թ.-ի ընթացքում չի հանդիսացել «Լյու Ընդ Ար» ՍՊԸ-ի հիմնադիր 20% և ավել բաժնեմասով, հետևապես նաև՝ չի համարվել ԱԱՀ վճարող:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 29.04.2015 թ-ին, թիվ 1270 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

**ՎԱԽԻՐԵԱՆ**